զէմայ։ Յորմէ ընդ աւուրս թուղթ եկն աշխարանաց, կոծոյ և սգոյ եթէ Հոռոմք առին զՍուրբ Յակոբ ի ձեռաց մերոց. դուք զի՞ ունիք ընդ Թումային կոծ և զի՞նչ հոգայք զդայ, առաւե՞լ գործիք ունի դայ քան զձեզ ի բարին, կամ դուք հաստատեալ էիք զօրէնս և զկանոնս և դայ քայքայէ՞ր. և որ սոցին նման բանս. և ի վերայ այսր ամենայնի քանիցս անգամ բողոք բարձի առ ձեզ՝ թէ Ո՛վ մարդիք, վասն է՞ր զԵրուսաղէմայ բանն չէք հոգար՝ երբ դուք քրիստոնեայ էք, զհաւատս և զդաւանութիւնս կամիք պայծառացուցանել, եթէ իմ բարեկամ էք. զի՛նչ կամի առնել Թուման ձեզ՝ ինձ արասցէ և Երուսաղէմայ։ Եւ լուեալ զայս իշխանացն՝ ի խոր խոցեալ զչկամիլն եւ զոչ համաձայնիլն Եղիազարի ընդ խորհուրդս նոցա, համբաւեցին եթէ Թումայ հակառակեցաւ Երուսաղէմայ և զԵրուսաղէմ հարկատու արար, որ վեր ասացաւ։ Եւ մտան առ Աստուածատուր վարդապետն՝ թէ ընդունիս զՓռանկն և զհերձուածողն՝ դու ևս սուտ ես, և թէ ոչ ընդունիս՝ ընդ մեզ լե՛ր և դու։ Եւ վասն Երուսաղէմայ յոյժ յոյժ բառնային պատճառ իմն եղեալ և ասէին՝ Ժողով արա՛յ քահանայից և ժողովրդեանն։ Եւ երթային ի ժողովն ոմանք յահէ նոցա, ոմանք չարոյ և ոմանք բարի իմն կարծեալ հաւատային պարզամիտք, քանզի չէին ամենեքեան Եղիազարեանք, որ վասն նորա արարին, այլ հակառակ էին։ Բայց ի կորուստ առն միաբանեցան, յորոց և միոն Հալապցի Դաւիթ վարդապետն չարագրեալ ի մտօք բանս պարսաւանաց և ՀԼասուց Թումային, կնքով Աստուածատուր վարդապետին առաքեալ յեկեղեցիսն զի ընթերցցին հանդերձ նզովիւք՝ ընդ առաջին հերձուածողսն հաւասարեալ։ Եւ միաբանելոցն դաշին այս՝ ուրոյն ուրոյն կնքով արքն ժողովեալք, եւ որ ոչն մօտրէր՝ ի բաց վարէին նախատանօք. և աւագիրի-